ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՄԵՆ ԱԲՐՈՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Արմեն Աբրոյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Վրաստան (ք. Թբիլիսի), 2019թ. նոյեմբերի 14-ից 15-ը:

4. **Հրավիրող կողմը.**

Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարություն:

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն «Community networks: Connecting the Next Billion/Համայնքային ցանցեր. միացում հաջորդ միլիարդին» գագաթաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

2019թ. նոյեմբերի 14-ից 15-ը Վրաստանում կայացած «Community networks: Connecting the Next Billion/Համայնքային ցանցեր. միացում հաջորդ միլիարդին» գագաթաժողովին մասնակցել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Արմեն Աբրոյանը:

Նստաշրջանի ընթացքում ներկայացվել են մի շարք շնորհանդեսներ, և տեղի են ունեցել քննարկումներ: Քննարկվել են ոլորտային կարևորություն և արդիականություն ունեցող բազմաթիվ հարցեր: Մասնավորապես՝ գագաթաժողովի ընթացքում կայացել են 3 լիագումար նիստեր և բարձր մակարդակի կլոր սեղանի քննարկում:

Լիագումար նիստերի ընթացքում քննարկվել են «Համայնքային ցանցերում «Համայնքի» բաղադրիչը», «Համայնքային ցանցերի կայունությունը. Երկխոսություններ գործարարների, ներդրողների և դոնորների միջև», «Քաղաքական և կարգավորող լանդշաֆտ՝ համայնքային ցանցերի համար» և այլն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միջոցառմանը հայկական կողմից պետական մակարդակով մասնակցության հարցը քննարկվել էր դեռ սույն թվականի հոկտեմբերին Հայաստանում կայացած «N2 Forum» շրջանակներում «Ինտերնետ Հանրություն» միջազգային ընկերության Եվրոպական բյուրոյի ղեկավար Ֆրեդերիկ Դոնկի հետ հանդիպման ժամանակ:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Արմեն Աբրոյանը ելույթով մասնակցեց միջոցառման բացման արարողությանը՝ շեշտը դնելով Հայաստանի ամբողջ տարածքով 3G և գրեթե ամբողջ տարածքով 4G ծածկույթն ապահոված տեղական ընկերությունների վրա, որոնք բավականին մեծ աշխատանքն են կատարել այդ ուղղությամբ, սակայն տնտեսապես անհարմար լինելու պատճառով չեն կարողացել ապահովել 100 տոկոսանոց ծածկույթ: Խնդրի լուծման համար ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության աջակցությամբ իրականացվում են նախագծեր, որոնց միջոցով նախատեսվում է ապահովել սահմանամերձ և գյուղական տարածքներում գերարագ ինտերնետ կապի առկայությունը լայնաշերտ օպտիկամանրաթելային մալուխների միջոցով: Նախարարի տեղակալը խոսեց նաև համայնքային ցանցի ստեղծման և ակտիվ ներգրավվածության կարևորության մասին, ինչը հատկապես շոշափելի արդյունքներ կարող է ունենալ ռելիեֆի և լանդշաֆտի առանձնահատկությունների տեսանկյունից նմանություններ ունեցող երկրների միջև փորձի, գիտելիքների ու գաղափարների փոխանակման շնորհիվ (օրինակ՝ Հայաստանի և Վրաստանի միջև):

Միջոցառման շրջանակներում Ա. Աբրոյանը հանդիպումներ ունեցավ պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, մասնավորապես՝ կայացավ բավականին արդյունավետ հանդիպում Վրաստանի Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարի տեղակալ Նիկոլոզ Ալավիձեի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին հեռահաղորդակցության ոլորտի, թվայնացման, ինչպես նաև տվյալ ոլորտներում միջազգային կառույցներում և հարթակներում համատեղ գործունեությունների հարցերը (Եվրոպական Միության Թվային շուկաների ներդաշնակեցման (HDM) շրջանակներում իրականացվող ծրագրերի մասով համագործակցության և համատեղ նախագծերի ներկայացման, Ասիա-Խաղաղօվկիանոսյան տեղեկատվական ՍուպերՄայրուղի (Asia-Pacific Information Superhighway) շրջանակներում համագործակցության և Թվային ոլորտում հայ-վրացական համագործակցության վերաբերյալ համապարփակ փաստաթղթի մշակման հնարավորությունները և այլն): Հատկապես ընդգծվեցին համագործակցության շրջանակները բարձր տեխնոլոգիաների, ստարտափների խթանման և ԵՄ-ն Հայաստանի համար (EU4Digital) ծրագրի շրջանակներում միասնական թվային ստորագրության նախագծի ուղղություններով: Երկու կողմերն էլ կարևորեցին Հայաստան-Վրաստան լայնաշերտ կապի զարգացման նպատակով ինտերնետի թողունակությունը բարձրացնելու համար Սև ծովով նոր ինտերնետ կապի գիծ անցկացնելու գաղափարը, որն էլ կապահովի գերարագ ինտերնետի առկայությունը ոչ միայն Հայաստանում և Վրաստանում, այլև Հայաստանի միջոցով դեպի Իրան և

այլ երկրներ, ինչը կդառնա ևս մեկ քայլ առաջ՝ Հայաստանը տարածաշրջանում տեխնոլոգիական կենտրոն դարձնելու ուղղությամբ:

8. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Մասնակցությունը վերոնշյալ գագաթաժողովին հնարավորություն ընձեռեց երեք ոլորտների մասնակիցների (մասնավոր, հասարակական և քաղաքացիական հասարակության) հետ քննարկել համայնքային ցանցերին վերաբերող հարցեր, ներառյալ՝ ենթակառուցվածքների բաժանման, սպեկտրի բաշխման և ունիվերսալ ծառայությունների ֆինանսավորման տեխնոլոգիաները, լավագույն փորձերը, սոցիալ-տնտեսական ասպեկտներն ու քաղաքականության տարբերակները:

Առանձնակի հարկ է նշել, որ Վրաստանի Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարի տեղակալ Նիկոլոզ Ալավիձեի հետ հանդիպման ժամանակ կողմերը պայմանավորվեցին Սև ծովով նոր ինտերնետ կապի գիծ անցկացնելու գաղափարի և մյուս արծարծված հարցերին գործնական ընթացք տալու համար կազմակերպել հեռահար քննարկում՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Վրաստանի Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարության ստորաբաժանումների ներգրավմամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Արմեն Աբրոյան

20.11.2019թ.